ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ARMENIAN STUDIES TODAY AND DEVELOPMENT PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003

Զեկուցումների ժողովածու
Collection of papers

ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲՆԱԳԱՎԱՌ

Աշոտ Մելքոնյան
Հայաստան

Պատմական գիտությունների շարքում իր ուրույն տեղն ունի պատմական ժողովրդագրությունը, որը համեմատաբար նոր բնագավառ է հայագիտության մեջ: Հայոց պատմության ուսումնասիրության տեսանկյունից այն ունի ոչ միայն գիտական, այլ նաև ճանաչողական ու քաղաքական նշանակություն:

Հայ պատմագիտության մեջ պատմական ժողովրդագրության խնդիրների պատշաճ մակարդակով հետազոտության պակասը հնարավորություն տվեց մի շարք օտարազգի պատմաբանների բավական լայն ճակատով անցնելու հայոց պատմության հանգուցային հարցերի նենգափոխմանը: 1930-ական թվականներին, պետականորեն թուրքական պատմագիտական դպրոցի ստեղծումից հետո, հրապարակ եկան բազմաթիվ աշխատություններ, ըստ որոնց՝ Օսմանյան կայսրության հյուսիսարևելյան նահանգներում, այն է՝ Արևմտյան Հայաստանում, հայ բնակչությունը երբևէ չի կազմել մեծամասնություն, իսկ թուրքերը հանդիսացել են երկրամասի հնագույն բնակիչները:

1950-60-ական թվականներին համանման նենգափոխման ենթարկվեցին նաև Խորհրդային Միության տարածքում, Հայկական ԽՍՀ-ից դուրս գտնվող հայաբնակ շրջանների պատմության հարցերը: Ադրբեջանական պատմագրությունը «սեփականեց» պատմական Արցախի, Ուտիքի, Սյունիքի, Նախիջևանի պատմությունը, այնտեղի ողջ մշակութային ժառանգությունն՝ իբրև աղվանական, փորձեց վերագրել ադրբեջանցիներին: Հայաստանի հյուսիսային շրջանները, մասնավորապես Գուգարքը, ներկայացվեցին զուտ քարթվելական մշակութային գոտի և այլն:

Հայ պատմագիտության մեջ Հայաստանի պատմական ժողովրդագրության հարցերի ուսումնասիրության ուղղությամբ առաջին քայլերը կարելի է նկատել դեռևս 17-րդ դարում Հակոբ Կարնեցու մոտ: Նա ներկայացրեց Արևմտյան Հայաստանի ամենաընդարձակ նահանգներից մեկի՝ Էրզրումի էյալեթի և հարակից մոտ 30 գավառների 17-րդ դարի կեսերի վարչաէթնիկ նկարագիրը: Թեև այստեղ հեղինակը կոնկրետ թվական տվյալներ չի հաղորդում գավառների բնակչության մասին, սակայն հստակորեն ուրվագծում է պատմական Բարձր Հայքի և նրան հարող տարածքների հայեցի էթնոնկարագիրը: Նրա «Շինուած Կարնո քաղաքին» աշխատության շնորհիվ պարզ է դառնում, որ օսմանյան տիրապետության հաստատումից ավելի քան կես դար անց Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը փաստորեն բնակեցված էր գերազանցապես հայերով:

Ուշագրավ է, որ համեմատաբար ավելի համապարփակ ձևով՝ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Հայաստանի պատմական ժողովրդագրության հարցերի ուսումնասիրությամբ հանդես եկած նշանավոր հայագետ Ղուկաս Ինճիճյանն ար-

դեն վկայում է Հայկական լեռնաշխարհի հայեցի էթնոպատկերը, այլև մատնանշում 17-18-րդ դարերում տեղի ունեցած էթնիկ տեղաշարժերը, որոնց արդյունքում հատկապես Արևմտյան Հայաստանի առանձին շրջաններում հանդես են գալիս օտար էթնիկական կամ էթնոկրոնական խմբեր:

19-րդ դարի երկրորդ կեսին ժողովրդագրության հարցերն ավելի լայնորեն հետաքրքրեցին ուսումնասիրողներին, հանգամանք, որը պայմանավորված էր պատմագիտության մեջ ազգային-քաղաքական խնդիրների նկատմամբ հատուկ վերաբերմունքի աճով: Ղևոնդ Ալիշանի նշանավոր պատմաաշխարհագրական աշխատություններին զուգընթաց, ստեղծվեցին Ալ. Երիցյանի, Գ.Սրվանձտյանցի, Մ.Միրախորյանի, Արիստակես և Երեմիա Տկանցների և ուրիշների արժեքավոր աշխատությունները, որոնց մեծ մասը, որ նվիրված էր հատկապես Արևմտյան Հայաստանին, հրատարակվեց առանձին գրքերով: 20-րդ դարի սկզբին խնդրին ավելի մասնագիտորեն անդրադարձավ Ա-Դոն: Նա բավական հանգամանորեն հետազոտեց Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգների վարչաժողովրդագրական հիմնահարցերը՝ փորձելով հնարավորինս համապարփակ ներկայացնել այդ վիլայեթների վարչաժողովրդագրական և սոցիալ-քաղաքական կյանքը:

Հայաստանի ժողովրդագրության հարցերը հատուկ ուշադրության արժանացան ռուսական պաշտոնական շրջանակների կողմից: 19-րդ դարի սկզբին այդ հետաքրքրությունը պայմանավորված էր երկրամասը նվաճելու Ռուսական կայսրության քաղաքականությամբ, իսկ 1830-ական թվականներից սկսված՝ նաև նորանվաճ Արևելյան Հայաստանը վարչաքաղաքական ու տնտեսական առումով Ռուսական տերության հետ կապելու ձգտմամբ: Ռուսական ռազմական իշխանությունների և նրանց կողմից 1830 թ. ստեղծված «Անդրկովկասյան մարզերում ռուսական աշխարհագրական վարչության» ամենագործուն աջակցությամբ հավաքվեց հսկայական քանակությամբ արխիվային նյութ, որի մեծ մասը պահպանվում է Թբիլիսիի, Մոսկվայի և Երևանի զանազան արխիվներում: Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչի հանձնարարությամբ մի խումբ սպաներ մանրազնին հետազոտության ենթարկեցին Ռուսական կայսրությանը սահմանակից օսմանյան նահանգները, որոնց վերաբերյալ հավաքված նյութերը տեղ գտան Ն. Ուշակովի արժեքավոր աշխատության մեջ[1]:

Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ ֆինանսների նախարար Կանկրինի հրամանով հետազոտություններ կատարած արշավախմբի նյութերի հիման վրա ստեղծվեց քառահատոր մեկ այլ կարևոր աշխատություն:[2] 1830–ական թվականներին հրատարակվեցին Օ. Եվեցկու և Պ. Զուբովի ուսումնասիրությունները:[3] Վերոհիշյալ հետազոտությունների հեղինակներն առատորեն օգտվել են տարբեր հանձնախմբերի հավաքած արխիվային նյութերից, որոնցից մի քանիսը փաստորեն արժեքավոր անտիպ աշխատություններ են:

Հրատարակվեցին կովկասագիտական բնույթի մենագրություններ, մատենաշարեր, ժողովածուներ ու պարբերականներ: Հարուստ հետազոտական նյութի հիման վրա հրապարակ եկան Գ. Ռադդեի, Լ. Զագուրսկու,[4] Ք.Ա. Վերմիշևի [5] և այլոց աշխատությունները: Տնտեսագետ, հասարակական գործիչ Քրիստափոր Վերմիշևը, հիրավի, տիտանական աշխատանք կատարեց Թիֆլիսի նահանգի Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում: Հարուստ վիճակագրական, տնտեսական և այլ բնույթի նյութեր հիման վրա, որոնց զգալի մասն առանձին աղյուսակներով զետեղվեց աշխատության մեջ, ստեղծվեց կարևոր հետազոտություն վերոհիշյալ գավառների 19-րդ դարի երկրորդ կեսի ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ ժողովրդագրության վերաբերյալ: Հայկական մարզի համակողմանի ուսումնասիրության տեսակետից բացառիկ կարևորություն ներկայացրեց Ի. Շոպենի հանրահայտ աշխատությունը:[6] Արևմտահայաստանի վարչավիճակագրական վիճակն արտացոլող նյութեր հրատարակեցին Ա. Կոլուբակինը, Յա. Մալաման, Վ. Մանսկին և ուրիշներ: Զգալի նյութ հավաքեցին նաև եվրոպական ուղեգիրները:

20-րդ դարում Արևմտահայաստանի ժողովրդագրության հարցերին այս կամ այն չափով անդրադարձան բազմաթիվ սփյուռքահայ հեղինակներ՝ մասնավորապես մեր կորուսյալ հայրենիքի նահանգների ու գավառների միջնեղեռնյան շրջանի դեմոգրաֆիկ պատկերը վեր հանելու մղումներով: Այդ հեղինակներից կարելի է առանձնացնել Հ. Տաշյանին[7], Գ.Սյուրմենյանին,[8] Ատրպետին,[9] Մ.Արսլանյանին,[10] Ղ.-Չարըգին[11], Հ.Քոսեանին[12] և ուրիշների: Եղան ուսումնասիրողներ, որոնք փորձեցին աշխատանքներ ստեղծել նաև արևմտահայերի թվաքանակի խնդրի շուրջ (Ե.Խաչանասյան, Լ.Չորմիսյան և այլք), սակայն համապարփակ ու խորը գիտական աշխատություններ, այնուամենայնիվ, չգրվեցին: Այդ դժվարին ու աշխատատար հետազոտության համար պահանջվում էր խորը մասնագիտական պատրաստություն, որի համար անհրաժեշտ էր որոշակի ժամանակ: Որպես կանոն, վերոհիշյալ հեղինակների ճնշող մեծամասնությունը խնդիրը քննության առավ ընդհանուր Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական ու տնտեսական պատմության հենքի վրա, իսկ ժողովրդագրության հարցերին անդրադարձավ, գլխավորապես իբրև վիճակագրական տեղեկությունների վերլուծություն: Այսինքն՝ ծանրակշիռ, խորքային վարչաժողովրդագրական հետազոտություններ չկատարվեցին:

Խորհրդահայ պատմագրության մեջ ժողովրդագրության հարցերի շոշափումն սկսվեց 1960-ական թվականներից: Բազմաթիվ պատմաբաններ (Թ.Ավդալբեկյան, Մ.Զուլալյան, Ա.Համբարյան, Հ.Ղազարյան, Հ.Պողոսյան և ուրիշներ), ուսումնասիրելով Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությունը այլևայլ առումներով, այս կամ այն չափով շոշափեցին նաև դեմոգրաֆիական խնդիրներ՝ բնակչության ազգային կազմի, թվաքանակի, էթնիկ տեղաշարժերի, դրանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրդապատճառների, էթնոկրոնական համայնքների և այլ հարցեր: Սակայն ավելի նպատակային, մասնագիտացված հետազոտություններ մեզանում սկսեցին իրականացվել 1980-ական թվականներից: Հայ պատմաբանները հետամուտ եղան մասնավորապես Արևմտյան Հայաստանի նահանգների ժողովրդագրության խնդիրներին: Գրվեցին հատուկ պատմաժողովրդագրական բնույթի աշխատություններ և ատենախոսություններ՝ նվիրված արևմտահայ նահանգներին և Արևելյան Հայաստանի առանձին երկրամասերին: Ա.Մելքոնյանն այդ դիրքերից ուսումնասիրեց Էրզրումի, Գ.Բաղալյանը՝ Վանի, Հ.Մուրադյանը՝ Կարսի վարչամիավորները: Ա.Սահակյանն աշխատանքներ է տանում Սեբաստիայի նահանգի ժողովրդագրության հիմնահարցերի ուղղությամբ: Լ.Սահակյանն անդրադարձավ Բարձր Հայքի հյուսիսային մի քանի գավառների ուշմիջնադարյան ժամանակաշրջանի տեղանունների քննությանը: Ուշադրությունից դուրս չմնացին Արևելյան Հայաստանի վարչաժողովրդագրության խնդիրները (Մ.Կարապետյան, Հ.Սարգսյան, Ա.Հայրապետյան և ուրիշներ): Այսինքն՝ ոչ միայն ուսումնասիրություններն ընթացան առանձին գավառների ու նահանգների կտրվածքով, այլև զուտ պատմական ժողովրդագրության պահանջների տեսանկյունով:

Ակադ. Վ.Խոջաբեկյանը ծանրակշիռ աշխատություններ ստեղծեց Արևելյան Հայաստանի, Խորհրդային Հայաստանի և Երրորդ հանրապետության տնտեսական ժողովրդագրության մասին: Ընդ որում, նա ներկայացրեց ոչ միայն անցյալի էթնոդեմոգրաֆիական հիմնահարցերը, այլև խիստ կարևոր ընդհանրացումներ կատարեց առաջիկա տասնամյակներում և ընթացիկ հարյուրամյակում տեղի ունենալիք գործընթացների շուրջ, նախանշեց մեր ազգային անվտանգությանը սպառնացող էթնոերևույթների կանխարգելման ուղիները:

Ակներև է՝ մեզանում որոշակի աշխատանք է կատարվել պատմական ժողովրդագրության հարցերի ուսումնասիրության բնագավառում: Այդուհանդերձ, կարելի է նշել, որ դեռ զուտ՝ էթնոդեմոգրաֆիկ հետազոտություններ կատարելու ճանապարհին հայ մասնագետներն ունեն հսկայական անելիքներ, որոնց հաղթահարումը կապված է բազմաթիվ դժվարին խնդիրների հետ: Բանն այն է, որ պատմական

ժողովրդագրությունը, լինելով պատմագիտության բնագավառ, միաժամանակ ենթադրում է սերտ կապակցվածություն հարակից մի շարք գիտությունների հետ, հանգամանք, որը, բնականաբար, պահանջում է համապատասխան գիտելիքների առկայություն և հետևաբար դժվարացնում է խորն ու համակողմանի մասնագիտական հետազոտությունների կատարումը:

Հայաստանի պատմական ժողովրդագրությունն ունի բազմաթիվ առանձնահատկություններ,[13] որոնց անտեսումը կարող է իր հերթին նոր դժվարությունների առջև կանգնեցնել և լուրջ սխալների հանգեցնել: Այսպես. վերցնենք միայն Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հարցը.

- Որպես կանոն, երկրամասի մասին տեղեկությունները խիստ կցկտուր են և հաճախ ոչ հավաստի: Ընդ որում, տարբեր աղբյուրներում միևնույն վարչամիավորի՝ նահանգի (էյալեթ-վիլայեթ), գավառի (լիվա-սանջակ) կամ գավառակի (կազա) մասին տարբեր աղբյուրներ (պաշտոնական թուրքական վիճակագրություն, օտարերկրյա ճանապարհորդներ, հայկական աղբյուրներ և այլն) տարբեր, հաճախ էլ՝ հակասական տեղեկություններ են հաղորդում, հանգամանք, որը պահանջում է մանրակրկիտ վերլուծական աշխատանք: Հատկանշական է, որ զանազան պատճառներով ինչպես թուրքական պաշտոնական աղբյուրներում, այնպես էլ հայկական նյութերում հաճախ հայ բնակչության թվաքանակը միտումնավոր կերպով նվազեցված է. առաջին դեպքում կայսրության մեջ հայության տեսակարար կշիռը նվազ ցույց տալու միտումով, երկրորդում՝ իշխանություններին ավելի նվազ քանակությամբ հարկեր վճարելու նկատառումով:

- Հնարավոր չէ միանման վերաբերմունք հանդես բերել նաև տարածաշրջանը բնակեցնող տարբեր ժողովուրդների մասին եղած տեղեկությունների նկատմամբ, մանավանդ, որ դրանք մեծմասամբ ներկայացված են ոչ թե ըստ շնչերի, այլ «տների», այսինքն՝ ընտանիքների: Հետևաբար ծագում է հայերի, քրդերի, թուրքերի և էթնիկ այլ խմբերի ծխերի միջին մեծության հարցում խիստ տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը: Իդեպ, այդ մեծությունը տարբեր է նաև ոչ միայն ազգությունների, այլև քաղաքներում և գյուղերում ապրող բնակչության մեջ: Ցավոք, այս հանգամանքները ևս հաճախ անտեսվել են՝ հիմք հանդիսանալով թյուր ու սխալ եզրահանգումների: Արդյունքում գլխավորապես նվազեցվել է հայության թիվը, քանզի շրջանցվել է հայկական նահապետական ընտանիքներում բազմանդամության իրողությունը և զուգընթաց ուռճացվել թուրք և քուրդ բնակչության թվաքանակը: Քրդերը, որոնք եղել են հիմնականում քոչվոր, օտարների կողմից հաճախ «հաշվառվել» են մի քանի անգամ՝ ամռանը լեռնային շրջաններում, ուր արածացրել են իրենց անասունները և ձմռանը՝ հարթավայրերում, հայկական գյուղերում, այսպես կոչված «ղշլաղության» իրավունքով ապրելու ընթացքում:

- Բավական դժվարին խնդիր է նաև թուրք բնակչության հաշվառման հարցը, որի համար ավելի շուտ գործածվել են ոչ թե ուղղակի «թուրք», այլ «օսմանլի», իսկ հայկական աղբյուրներում՝ «տաճիկ» տերմինները: Բայց երբեմն այդ տերմինների տակ ի նկատի են առնվել ոչ միայն թուրք, այլև բոլոր մահմեդական ժողովուրդները՝ թուրքմենները, կարափափախները, քրդերը, պարսիկները և այլք, ինչու չէ՝ նաև մահմեդականացած ու կիսամահմեդականացած, անգամ կաթոլիկ ու բողոքական հայերը:

- Արևմտյան Հայաստանում հայ բնակչության հաշվառման հետ կապված ամենադժվարին խնդիրը, թերևս, հայության էթնոկրոնական զանազան խմբերի հիմնահարցն է: Օսմանյան դժնդակ տիրապետության պայմաններում ի սկզբանե՝ 16-րդ դարից հայության մահմեդականացման ու ազգաձուլման երևույթները դարձան երկրամասի ժողովրդագրական զարգացման գլխավոր ուղղությունը, հանգամանք, որը 19-րդ դարի վերջին քառորդից կազմեց սուլթանական քաղաքականության բաղկացուցիչ մասը: Նման քաղաքականության արդյունքը հանդիսացավ հայության էթնոկրոնական ու էթնոդավանական նոր խմբերի ի հայտ գալը: Հայության մի մասը, հատկապես էրզրումի նահանգի հյուսիսային գավառներում՝ Պոնտոսի լեռնաշղթայի երկայնքով, ստիպված եղավ ընդունել մահմեդականություն: Նրանց մի մասը միայն առերես իսլամացավ և մի քանի հարյուրամյակ պահպանեց իր ազգային դիմագծի բազմաթիվ հատկանիշներ՝ ձեռք բերելով «կեսկես» ասված անվանումը: Ոմանք էլ ընդունեցին «հայ-լազ», «համշինլի», ուղղակի՝ «իսլամ» և ազգային պատկանելություն չհաստատող այլ անուններ: Այս ամենին գումարվեցին նաև կաթոլիկ հայերը, որոնց կպցրեցին «ֆրանկ», իսկ Տայքի քաղքեդոնականներին՝ «գյուրջի» անվանումը[14]:

Բավարարվելով միայն Արևմտյան Հայաստանի դեմոգրաֆիայի վերաբերյալ վերոնշյալ օրինակների թվարկումով, փորձենք համառոտակի ներկայացնել Հայաստանի՝ պատմական ժողովրդագրության առջև դրված այն լուրջ խնդիրները, որոնց լուծումը պետք է լինի հայ մասնագետների առաջիկա տարիների հիմնական նպատակը: Նախ՝ անհրաժեշտ է միաժամանակ լրջորեն զբաղվել հարակից գիտությունների ուսումնասիրությամբ:

- Այսպես՝ էթնոդեմոգրաֆիական գործընթացների տնտեսական դրդապատճառների բացահայտման համար՝ տնտեսական ժողովրդագրություն:

- Բնակչության թվաքանակի հաշվառման համար՝ վիճակագրական նյութերի (հարկացուցակներ, մարդահամարներ և այլն) ուսումնասիրություն՝ ստատիստիկա՝ վիճակագրություն:

- Յուրաքանչյուր տարածաշրջանի, վարչական միավորի ճշգրիտ էթնոնկարագիրը վեր հանելու համար՝ պատմական աշխարհագրություն և քարտեզագրություն: Այսինքն՝ ամեն մի բնակավայրի մասին եղած տեղեկության հնարավոր քարտագրում և քարտեզագրում: Նման մոտեցմամբ, ամեն մի բնակավայրից հասնել գյուղախմբի, գավառակի, գավառի, նահանգի ու ամբողջ երկրամասի էթնիկ վիճակի բացահայտմանը:

- Տվյալ վարչամիավորի բնակչության էթնիկ խճանկարը պատկերելու համար՝ էթնոազգագրական, էթնոհնագիտական, մարդաբանական, մշակութաբանական և լեզվաբանական տվյալների համադրում, որի արդյունքում հնարավոր է դառնում յուրաքանչյուր ազգության, էթնոկրոնական ու էթնոդավանական խմբի թվաքանակի հաշվառումը:

1. Հին և միջնադարյան Հայաստանի տարբեր պատմաաշխարհագրական շրջանների ժողովրդագրական պատկերի վերհանում՝ եղած բավական ժլատ աղբյուրագիտական տվյալների և հնարավոր նոր նյութերի հայտնաբերման ու քննության շնորհիվ: Ընդ որում, հատուկ անդրադարձեր պետք է լինեն պարսկական, արաբական, սելջուկյան, մոնղոլական, թուրքմենական և պարսկա-թուրքական տիրապետությունների շրջանում օտար էթնոկրոնական խմբերի ներթափանցման, երկրամասի հիմնական բնակչության նկատմամբ նրանց թվական փոխհարաբերակցության, ազգաձուլման, կրոնափոխության և այլ հարցերին: Այստեղ կարևոր է պատմաժողովրդագրական խորը հետազոտությունների հիման վրա ցույց տալ օսմանյան տիրապետության բացասական ազդեցությունը Արևմտյան Հայաստանի էթնոդեմոգրաֆիկ զարգացման վրա: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ արդեն արևմտահայ մի քանի նահանգների ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն հիման վրա հստակորեն կարելի է նմանօրինակ եզրահանգումներ անել և դրանք փորձել բաղդատել այլ վարչամիավորների հետ:

2. Հետազոտել 19-րդ դարում Ռուսական կայսրության Անդրկովկաս ներթափանցումից հետո տեղի ունեցած հայանպաստ էթնիկ գործընթացները և տալ դրանց քաղաքական հետևանքների գնահատականը:

3. Արևմտյան Հայաստանի էթնիկ գործընթացների շղթայի մեջ վեր հանել երկրամասի ժողովրդագրական պատկերը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ ըստ առանձին վարչամիավորների և հստակորեն ներկայացնել հայոց մեծ եղեռնի ընթացքում պատմական Հայաստանի մեծագույն մասի հայաթափ-

ման աղետալի հետևանքները միաժամանակ խիստ կարևորելով ցեղասպանության զոհերի ճշգրիտ թվաքանակի խնդիրը:

4. Խորհրդային Հայաստանի և Երրորդ հանրապետության ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն, ինչպես նաև առաջիկա տասնամյակներին ու ներկա հարյուրամյակում սպասվելիք էթնոերևույթների կանխատեսում:

Վերոհիշյալից հետևում է, որ ընդհանրապես ժողովրդագրության բնագավառում շատ անելիքներ կան, որոնք հայագիտության խնդիրների մեջ մեծ կարևորություն ունեն: Բարեբախտաբար, հանրապետությունում և Սփյուռքում կան լուրջ մասնագետներ, որոնց ջանքերի շնորհիվ կարելի կլինի լուծել այդօրինակ խնդիրները և գիտության այս ճյուղը վերածել ինքնուրույն ու կուռ համակարգի: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործում է «Պատմական ժողովրդագրության» թեմատիկ խումբ, համապատասխան մասնագետներ կան ԵՊՀ-ում, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում և այլուր: Կարծում ենք, ժողովրդագրության խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ լուրջ քայլ կհանդիսանա հայագիտական ընթացիկ համաժողովի որոշման մեջ առանձին կետով կարևորել նաև այս հարցը, իսկ առաջիկայում հրավիրել միջազգային գիտաժողով՝ նվիրված ժողովրդագրության հանգուցային ու կնճռոտ թեմաներին՝ համապատասխան մասնագետների լայն ընդգրկումով:

Գրականություն

1 *История военных действий в Азиатской Турции в 1828–1829 г., ч. 1–2, СПб., 1836* և նույնի երկրորդ հրատարակությունը՝ *Варшава, 1843.*

2 *Обозрение российских владений за Кавказом в статистическом, топографическом и финансовом отношениях, ч. 4, СПб., 1836.*

3 *Зубов Платон, Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных ему земель, СПб., 1835; Статистическое описание Закавказского края, сост. Орест Евецкий, СПб., 1835.*

4 Գ. Ռադդեի և Լ. Զագուրսկու աշխատությունները հաճախ գրականության մեջ սխալմամբ նույնացվել են միևնույն վերնագրի տակ (*Поездка в ахалцихский уезд в 1872 г.*) և նույն մատենաշարում (*Записки кавказского отдела Императорского русского географического общества (ЗКОИРГО), книга 8, Тифлис, 1873, с. 1–46 и с. 47–85*) հաջորդաբար տպագրված լինելու պատճառով:

5 ***Вермишев Х. А.,*** *Экономический быт государственных крестьян в ахалцихском и ахалкалакском уездах Тифлисской губернии. - Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК), т. 3, Тифлис., 1886, с. 1–282.*

6 ***Шопен И.,*** *Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852.*

7 ***Տաշեան Յ.,*** Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, Նույնի՝ Տայք, դրացիք և Խոտորջուր, Վիեննա, 1978:

8 ***Միւրմենեան Գ.,*** Երզնկա, Գահիրէ, 1947:

9 ***Ատրպետ,*** Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929:

10 ***Արսլանեան Մ.,*** Բաբերդ եւ շրջակայքը, Փարիզ, 1954:

11 ***Չարըգ Ղ.,*** Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ, 1957:

12 ***Քոսեան Յ.,*** Բարձր Հայք, հ.Ա-Բ, Վիեննա, 1925-1926:

13 Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության առանձնահատկությունների մասին տե՛ս ***Մելքոնյան Ա.,*** Երզրում, Ե., 1994, էջ 103-112:

14 Կրոնափոխված և դավանափոխված հայ բնակչության մասին մանրամասն տե՛ս ***Մելքոնյան Ա.,*** նշվ. աշխ., էջ 52-70, 78-81 և այլն, նույնի՝ Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003, էջ 90-103: